

մեղի ծանօթ Սահլի բերդին պաշարումը եւ մանրամասնութիւններ կու տան առայդ: Այս Տաճիկ-Քուրտայեաները, նոյն Պարտաւայ արք ընտիրք ի Տաճկաց ասպատակներն են, զորս կը յիշէ ՏՂԻն Կազանկատուացի: Այս Տաճիկները, որոնք հաւանաբար Բարակի ազանդաւորներէն էին, եւ անոր առաջին ասպատակութիւնը կատարողները հաւանաբար Հայաշխարհի սահմաններէն ներս, կ'աւարեն Մուղանի դաշտին Ամարաս գաւառը, ուր յետոյ կը բնան ասպատակեցաւ ինքն իսկ Բարակ: Ամարասի գաւառը ասպատակելէ վերջ՝ իրենց աւարով եւ հազարի մօտ գերիներով կու դան Ծիկաքար (Մեծիրանց սահմաններուն մէջ), որ կ'երեւայ թէ Սահլի կը պատկանէր: Հոս ամբացած կ'երեւան Սահլի կիներ, դժբախտաբար անանուն՝ թէ՛ Միքայէլի եւ թէ՛ Բար Հերբայուսի մօտ: Սահլի անանուն կիներ ունէր եւ վանական եղբայր մը քաջ, որ բերդին (Ծիկաքար) պաշտպանութեան գլուխը կ'անցնէր եւ քաջութեամբ նիզակահար կը սպաննէ ասպատակներուն հրամանատարը, ըստ Բար Հերբայուսի: Սահլ կ'երեւայ թէ այլուստ դրազած էր ասպատակներով, եւ բերդը չէր գտնուէր անոր պաշարման ժամանակ: Սակայն անմիջապէս իւր քաջագոր եղբարք եւ իրենց զօրքերով (Կազանկատուացի) ի լուսանալ առաւօտուն (Կազանկատուացի), կամ արշալոյսին՝ ըստ Բար Հերբայուսի, կը հասնի պաշարեալ բերդին, կը յարձակի պաշարողներուն վրայ, կը յաղթէ ու կը ցրուէ զանոնք՝ որոնցմէ զգերեալսն ի բաց կորզելին (Կազանկատուացի): Այսպէս կարելի է համաձայնեցնել Բար Հերբայուսը Կազանկատուացիի վկայութեան՝ իրենց մանրամասնութեանց մէջ:

Սահլի Սմբատեանն է այս ընդհարման յաղթական հերոսը՝ ըստ Կազանկատուացիի, որ անտարակոյս անունի շիտթութեամբ Բար Հերբայուսի քով եղեր է Իսաակ Բար Ա.(չ)ուզ, այսինքն Սահլի որդի Աչոտի: Բնական է օտարի մը համար

դժուար չէր Սահլը վերձանել Սահլի եւ իրեն աւելի ծանօթ Աչոտի հետ նոյնացընել: Մենք հոս պիտի դորձածենք թէ՛ Սահլ հին ձեւը եւ թէ աւելի վերջ արարներէն դորձածուած Սահլ ձեւը:

Սահլ Սմբատեանի Կազանկատուացիէ տրուած Եռանշահիկ կոչումը աւելի տիրոջոս մըն է ժաւանդական: ԵՌԱՆՇԱՀԻԿ, կամ ինչպէս Հ. Ալիշան, Ալպոյաճեան կը գրեն ԱՌԱՆՇԱՀԻԿ, տիրոջոս մըն էր տըրուած Աղուանից արքայիկներուն: ԱՌԱՆ (ԵՌԱՆ) ԱՂՈՒԱՆԻՑ կոչումն է՝ Պարսկերէն կամ Արարերէն: ՇԱՀԻԿ նուագականն է պարսկերէն ՇԱՀ, այսինքն ԱՌՔԱՅ տիրոջոսին (ՇԱՀՆՇԱՀ, Արքայից արքայ):

Կազանկատուացի շատ կանուխէն կը յիշէ «գնտարնական աղբս Հայկազնեայց զԵՌԱՆՇԱՀԻԿԱՍ» (էջ 196): Կը պատմէ որ Ե. դարուն վերջը Միհրան անուն պարսիկ աւագ մը կը հաւնի Գարդմանաց երկրին եւ հոն կը հաստատուի՝ հիմնելով Միհրաւանը: Միհրան ընդմիշտ նուաճելու համար տեղական իշխանաւորները՝ անոնցմէ ի գլխաւորացն արս երկուսասն կը հրաւիրէ իր մօտ դաւով եւ սրով բառնայ զնոսա եւ տիրէ աշխարհին (էջ 196): Միհրանի յաջորդներէն գբաջն վարդան, որ շինեաց գրերդն Գարդմանայ գերիս ամա. եւ ի նեմգելն ի սիրտ իւր գնախնական ազգս Հայկազնեայց զԵՌԱՆՇԱՀԻԿ, գոր վերագոյն գրեցաք ի մատենիս՝ կոչէ որպէս ի նաշ. եւ հաց կորստեան գործեալ տայ նոցա ուտել. եւ ի նաշի անդ արեամբ նոցա արար գլխատումն արանց վաթսնից միայն քսոյոյր ի նոցանէ գիտայացեալն իւրում ցեղին զԱրմիիքն ԵՌԱՆՇԱՀԻԿ (էջ 196-7):

Կազանկատուացիի վկայութենէն անտարակոյս կ'երեւայ որ նախ ԵՌԱՆՇԱՀԻԿները հին Հայկազնեան ցեղ մըն էին: Աղուանից այս Հայկազնեան Տէրերը կ'երեւայ թէ կը տիրապետէին բաւական խոշոր հողամասի մը, որուն մաս էր Գարդմանաց երկրին ալ: Կարելի է ենթադրել որ Պարսիկ Միհրանի անճիտած երկուսասն իշ-